ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունվարի 2022 թվականի N 01

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով երեխաների հաճախումների նվազման վերաբերյալ մանկապարտեզ ՀՈԱԿ-ների տնօրենների գրությունները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2022 թվականի հունվար 3-ից մինչև 31-ը ներառյալ դադարեցնել Եղեգնաձոր համայնքի թիվ 1, թիվ 2, թիվ 5, Մալիշկայի թիվ 1, թիվ 2, Գլաձոր բնակավայրի, Գետափ բնակավայրի «Արևիկ» և Վերնաշեն բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ների գործունեությունը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված մանկապարտեզ ՀՈԱԿ -ների տնօրեններին,հաշվապահներին և պահակներին համարել աշխատանքի մեջ և վարձատրել լրիվ դրույքաչափով ,իսկ մյուս աշխատակիցներին ՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. հունվարի 03
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունվարի 2022 թվականի N 02-Ա

ԼՅՈՒԴՎԻԳ ԱՐԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 139-րդ կետը և կառուցապատող Լյուդվիգ Հակոբյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի փողոց 33, թիվ 32/1 հասցեում նոր կառուցված առևտրի սրահի շահագործման համար՝ քաղաքացի Լյուդվիգ Արայի Հակոբյանին տալ շահագործման թույլտվություն (ավարտական ակտ):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. հունվարի 07
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2022 թվականի N 03

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 25.12.2020թ-ի թիվ 103-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արթուր Մուշեղի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրացման 2401617վկայական) հողամասի՝ ք. Եղեգնաձոր,Կանոյի 2ա/38 հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Կամոյի փողոց,2/1/38 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. հունվարի 11
ք.Եղեգնաձոր